# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 144-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 05-ը դեկտեմբերի 2025 թվականի թիվ 16 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 05.12.2025թվականի թիվ 16 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. 2026 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3. 2026 թվականի համար Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

4. 2026 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5. 2026 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. Արենի համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

7. Ամանորին ընդառաջ համայնքում բնակվող բոլոր տնային տնտեսություններին շնորհավորական բացիկներ և նվերներ հատկացնելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերը հաստատելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2027 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին համաձայնություն տալու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի 2025-2027թթ. համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին:

11. Արենի համայնքի ավագանու 08.08.2023թվականի թիվ 98-Լ որոշման հավելված 4-ում, 07.05.2025թվականի թիվ 054-Ա և 01.03.2024թվականի թիվ 027-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

12. Արենի համայնքի Խաչիկ և Ռինդ բնակավայրերի վարչական տարածքում գտնվող քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

13. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի նախկին բնակիչ՝ հանգուցյալ Ալեքսան Աղվանի Մկրտչյանի անվամբ հաշվառված ԳԱԶ 24-01 մակնիշի 34TL591 պետհամարանիշի մարդատար ավտոմեքենային գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին:

14. Արենի համայանքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

15. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,087հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և օրինականացված բնակելի նպատակային նշանակության շինությունները կառուցապատող Ալբերտ Վոլֆիկի Մարգարյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:

16. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելուն համաձայնություն տալու մասին:

17. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

18. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու մասին:

19. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

20. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 10-004-0158-0011 կադաստրային ծածկագրով 0.33 հա հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

21. Արենի համայնքի մանկապարտեզներին արձակուրդ տրամադրելու մասին:

22. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 145-Ն

### 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-14 հոդվածների պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Սահմանել Արենի համայնքի տարածքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման 1 և 2 հավելվածների։

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԷ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 145-Ն որոշման

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքում 2025թվականին սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. Արենի համայնքի վարչական տարածքում կառուցվող հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 200 հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

Սույն կետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով

հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածազննահատման (զոնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

| Գոտի | Գոտիականության գործակից |
|---|---|
| 1-4 | 5.0 |
| 5-8 | 4.0 |
| 9-12 | 3.0 |
| 13-16 | 2.0 |
| 17-20 | 1.0 |

գ. Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ,

դ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամի և սույն կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 հազար դրամի և սույն կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

1.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս կառուցվող անհատական բնակելի տների, ինչպես նաև Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ վաթսուն հազար դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,
- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 հազար դրամի և շենքի կամ շինության կառուցման

վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 հազար դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում

հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4.1) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4.2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հարյուր դրամ*,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ*,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ*,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ*,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քսանհինգ հազար դրամ*.

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հարյուր դրամ*,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ*,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ*,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ*.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ*.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասը հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հիսուն հազար դրամ,

դ. խաղատների համար՝ յոթ հարյուր հիսուն հազար,

ե. շահումով խաղերի համար՝ երեք հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր քսանհինք հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ*,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ*,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանմեկ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար մեկ հարյուր հազար դրամ

15) Հայաստանի Հանրապետության Արենի համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

18) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասնհինգ հազար ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում երկու հարյուր հազար ՀՀ դրամ,

19) համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ 10 (տասը) հազար դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2. Շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է 0.5 գործակցի կիրառմամբ: Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության երկարաձգման համար տեղական տուրքը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված դրույքաչափերով:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

***նշված գների վրա, ըստ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի, կիրառվում է 0,5 գործակից:***

Հավելված N2
ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 145-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքում 2025թվականի համար սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցած աղբահանության ծառայությունների վճար է սահմանվում՝
   1) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 100 ՀՀ դրամ,
   2) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 105 ՀՀ դրամ,
   3) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 45 ՀՀ դրամ
   4) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 15 դրամ,
   5) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 5 ՀՀ դրամ:
2. Համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցած խմելու ջրամատակարարման ծառայությունների վճար է սահմանվում՝
   1) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտեղ տեղադրված չեն ջրաչափեր) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան 100 ՀՀ դրամ,
   2) հասարակական և արտադրական տարածքների 1քմ-ի համար՝ (որտեղ տեղադրված չեն ջրաչափեր) ամսեկան 200 ՀՀ դրամ,
   3) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտեղ տեղադրված են ջրաչափեր) 1 խմ-ի համար՝ ամսեկան 50 ՀՀ դրամ
   ա) 1 շնչի հաշվով մեկ ամսվա ընթացքում 6խմ-ից ավել ջուր օգտագործելու դեպքում սահմանել 1 խմ.-ի համար 150 ՀՀ դրամ՝ հունիս-օգոստոս ամիսների ընթացքում,
   բ) տնտեսվարող սուբյեկտների համար 30խմ-ից ավել ջուր օգտագործելու դեպքում սահմանել 1 խմ.-ի համար 150 ՀՀ դրամ,
   4) Ազատակածոր բնակավայրում խմելու ջրի վարձ է սահմանվում ամսեկան 500 ՀՀ դրամ՝ մեկ տնտեսության համար:
3. Համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցած ջրահեռացման ծառայությունների վճար է սահմանվում՝

1) համայնքի բնակիչների համար, ովքեր օգտվում են համայնքի կոյուղագծերից ամսեկան 30 ՀՀ դրամ՝ մեկ շնչի հաշվով,

2) տնտեսվարող սուբյեկտների համար 15 ՀՀ դրամ 1քմ-ի համար ,

4. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում, որտեղ առկա են ինքնահոս ջրատարեր, որոնք սպասարկում է համայնքապետարանը, ոռոգման ջրի սպասարկման վճար սահմանել՝

1) 1 հա-ի համար տարեկան 20 հազար ՀՀ դրամ,

2) Արենի բնակավայրը որպես սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայր՝ 1 հա-ի համար տարեկան 10 հազար ՀՀ դրամ

3) Աղավնաձոր բնակավայրում 1խմ-ը 7 ՀՀ դրամ:

5. Համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցած մղիչ պոմպերով ոռոգման ջրի ծառայությունների վճար է սահմանվում՝ ամսեկան 4000 ՀՀ դրամ՝ 0,1հա հողամասի հաշվարկով

6. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց հինգ հազար ՀՀ դրամ փոխհատուցման վճար

7. Համայնքի սեփականության և օգտագործման ներքո գտնվող շարժական և անշարժ գույքը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց մրցույթում կամ աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը համայնքապետարանի բյուջե է վճարում փոխհատուցման վճար՝ գույքի չափագրման, գնահատման, կադաստրային ծախսերի, գնահատման և հայտարարության տպագրման համար համայնքապետարանի կողմից ներկայացված անդորրագրերի հիման վրա:

8. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար ՀՀ դրամ:

9. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար ՀՀ դրամ:

10. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար չի սահմանվում:

11. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում ամսեկան 5000 ՀՀ դրամ՝ մեկ երեխայի հաշվով:

11.1) համայնքային ենթակայության շարժական արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում ամսեկան 5000 ՀՀ դրամ՝ մեկ երեխայի հաշվով.

12. Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց սահմանվում է փոխհատուցման վճար՝ երկու հազար ՀՀ դրամ:

13. Կիրառել արտոնություններ.

1) Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվող երկկողմանի ծնողազուրկ երեխաներին ազատել փոխհատուցման վճարներից,

2) Մեկ ընտանիքից համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվող երեք և ավելի երեխաների դեպքում, մեկ երեխային ազատել փոխհատուցման վճարից,

3) Արտադպրոցական ծառայություններից օգտվող երեք խումբ հաճախող երեխաներին ազատել մեկ խմբի փոխհատուցման վճարից,

4) Արցախյան պատերազմում զոհված կամ 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներից արտադպրոցական ծառայություններից օգտվող երեխաներին ազատել փոխհատուցման վճարներից:

6) Արցախյան պատերազմում զոհված կամ 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներից (ծնող, ամուսին և/կամ կին) տեղական վճարները գանձել սահմանված դրույքաչափերի 50%-ի չափով:

Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 146-Ա

### 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 147-Ա

## 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի և 34-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

2026թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 147-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ | ԾԱԾԿԱԳԻՐԸ |
|---|---|---|---|---|---|---|
| | ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 1 | 550,000 | 550,000 | |
| 2 | Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ | 1 | 1 | 447,800 | 447,800 | |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 385,000 | 385,000 | |
| | ***Ընդամենը*** | *3* | *3* | *1,382,800* | *1,382,800* | |
| | ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | | | | |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 1 | 310,000 | 310,000 | |
| 5 | Համայնքի ղեկավարի օգնական Արենի բնակավայրի պատասխանատու | 1 | 1 | 381,100 | 381,100 | |
| 6 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 1 | 350,000 | 350,000 | |
| 7 | ՔՊ խմբակցության փորձագետ | 0.5 | 1 | 130,000 | 65,000 | |
| | ***Ընդամենը*** | *3.5* | *4* | *1,171,100* | *1,106,100* | |
| | ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | | | | |
| 8 | Ելփին բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 370,800 | 370,800 | |
| 9 | Չիվա բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 370,800 | 370,800 | |
| 10 | Ռինդ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 370,800 | 370,800 | |
| 11 | Խաչիկ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 370,800 | 370,800 | |
| 12 | Արփի բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 370,800 | 370,800 | |
| 13 | Աղավնաձոր բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 391,400 | 391,400 | |
| 14 | Գնիշիկ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 319,300 | 319,300 | |
| 15 | Ագարակաձոր բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 370,800 | 370,800 | |
| | ***Ընդամենը*** | *8* | *8* | *2,935,500* | *2,935,500* | |
| | ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | | | | |
| 16 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 1 | 447,800 | 447,800 | 1.2-1 |
| 17 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 350,000 | 350,000 | 2.3-1 |
| 18 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 350,000 | 350,000 | 2.3-2 |
| 19 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 350,000 | 350,000 | 2.3-3 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 20 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 350,000 | 350,000 | 2.3-4 |
| 21 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 350,000 | 350,000 | 2.3-5 |
| 22 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-1 |
| 23 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-2 |
| 24 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-3 |
| 25 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-4 |
| 26 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-5 |
| 27 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-6 |
| 28 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-7 |
| 29 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-8 |
| 30 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-9 |
| 31 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 303,000 | 303,000 | 3.1-10 |
| 32 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-1 |
| 33 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-2 |
| 34 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-3 |
| 35 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-4 |
| 36 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-5 |
| 37 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-6 |
| 38 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-7 |
| 39 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 233,000 | 233,000 | 3.2-8 |
| 40 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 205,000 | 205,000 | 3.3-1 |
| 41 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 205,000 | 205,000 | 3.3-2 |
| 42 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 205,000 | 205,000 | 3.3-4 |
| | ***Ընդամենը*** | *27* | *27* | *7,706,800* | *7,706,800* | |
| | *ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | | | | |
| 43 | Հավաքարար | 7.75 | 11 | 123,000 | 953,250 | |
| 44 | Համայնքի ղեկավարի վարորդ | 1 | 1 | 292,000 | 292,000 | |
| 45 | Գործավար | 1 | 1 | 233,000 | 233,000 | |
| 46 | Խաչիկ բնակավայրի մշակութային միջոցառումների կազմակերպիչ | 1 | 1 | 123,000 | 123,000 | |
| 47 | Ռինդ բնակավայրի Փառքի պուրակի պահպանման և շահագործման պատասխանատու | 0.5 | 1 | 123,000 | 61,500 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 48 | Ռինդ բնակավայրի մարզադաշտի պահպանման և շահագործման պատասխանատու | 0.5 | 1 | 123,000 | 61,500 | |
| 49 | ՔՊ խմբակցության գործավար | 0.5 | 1 | 123,000 | 61,500 | |
| 50 | Հանրապետություն խմբակցության գործավար | 0.5 | 1 | 123,000 | 61,500 | |
| 51 | Արփի և Աղավնաձոր բնակավայրերի մշակութային միջոցառումների կազմակերպիչ | 0.5 | 1 | 114,000 | 57,000 | |
| 52 | Գրադարակ մշակութային կենտրոնի համակարգող | 1 | 1 | 114,000 | 114,000 | |
| 53 | Արև Է ելել ծրագրի մշակութային կառավարիչ | 1 | 1 | 114,000 | 114,000 | |
| 54 | Ավագ մարզիչ | 1 | 1 | 200,000 | 200,000 | |
| 55 | Բուժքույր | 0.5 | 1 | 104000 | 52000 | |
| | ***Ընդամենը*** | *16.75* | *23* | *1,909,000* | *2,384,250* | |
| | ***ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ*** | | | | | |
| 55 | Անասնաբույժ | 7 | 7 | 123,000 | 861,000 | |
| 56 | Արենի և Չիվա բնակավայրերի անասնաբույժ | 1 | 1 | 163,000 | 163,000 | |
| | ***Ընդամենը*** | *8* | *8* | *286,000* | *1,024,000* | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | *66.25* | *73* | *15,391,200* | *16,539,450* | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 148-Ա

## 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀՈԱԿ-ՆԵՐԻ) ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

2026թվականի համար հաստատել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման 1-8 հավելվածների:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Արենի համայնքի ավագանու
05.12.2025թվականի թիվ 148-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձորի մարզի «Արենի» ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Բնակավայր | Հաստիքային միավոր | Աշխատակիցների թվաքանակ | Պաշտոնային դրույքաչափ | Ընդամենը դրույքաչափ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՈԱԿ-ի տնօրեն | Արենի | 1 | 1 | 410000 | 410000 |
| 2 | ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական | Արենի | 1 | 1 | 300000 | 300000 |
| 3 | Հաշվապահ | Արենի | 1 | 1 | 300000 | 300000 |
| 4 | Պայմանագրերի և գանձումների պատասխանատու | Արենի | 1 | 1 | 282000 | 282000 |
| 5 | ՀՈԱԿ-ի տնտեսվար | Արենի | 1 | 1 | 210000 | 210000 |
| 6 | Ավտոպարկի վարիչ | Արենի | 1 | 1 | 350000 | 350000 |
| 7 | Ավտոպարկի տեխ. սպասարկող, վարորդ | Արենի | 1 | 1 | 340000 | 340000 |
| 8 | Էքսկավատորավար | Արենի | 1 | 1 | 350000 | 350000 |
| 9 | Կամազի վարորդ | Արենի | 1 | 1 | 200000 | 200000 |
| 10 | Աղբատար մեքենայի վարորդ | Արենի | 1 | 1 | 248000 | 248000 |
| 11 | Աղբատար մեքենայի վարորդի օգնական | Արենի | 1 | 1 | 195000 | 195000 |
| 12 | Աղբահանության տրակտորավար | Խաչիկ | 1 | 1 | 123000 | 123000 |
| 13 | Տրակտորավար | Արենի | 1 | 1 | 123000 | 123000 |
| 14 | Հրշեջ մեքենայի վարորդ | Խաչիկ | 1.5 | 2 | 123000 | 184500 |
| 15 | Էլեկտրիկ | Արենի | 1 | 1 | 166000 | 166000 |
| 16 | Եռակցող | Արենի | 1 | 1 | 251000 | 251000 |
| 17 | ՀՈԱԿ-ի բանվոր | Արենի | 4 | 4 | 225000 | 900000 |
| 18 | ՀՈԱԿ-ի բանվոր | Արենի | 1 | 1 | 195000 | 195000 |
| 19 | Խմելու ջրերի պատասխանատու/ՀՈԱԿ-ի բանվոր | Արփի | 1 | 1 | 225000 | 225000 |
| 20 | ՀՈԱԿ-ի բանվոր | Արփի | 0.5 | 1 | 114000 | 57000 |
| 21 | ՀՈԱԿ-ի բանվոր | Ագարակաձո | 1.5 | 2 | 114000 | 171000 |
| 22 | ՀՈԱԿ-ի բանվոր | Աղավնաձոր | 2 | 2 | 114000 | 228000 |
| 23 | ՀՈԱԿ-ի բանվոր | Աղավնաձոր | 1 | 1 | 123000 | 123000 |
| 24 | Ոռոգման ջրերի սպասարկող | Աղավնաձոր | 0.75 | 1 | 123000 | 92250 |
| 25 | ՀՈԱԿ-ի բանվոր | Ելփին | 1 | 1 | 123000 | 123000 |
| 26 | ՀՈԱԿ-ի բանվոր | Գնիշիկ | 1.5 | 2 | 123000 | 184500 |
| 27 | ՀՈԱԿ-ի բանվոր | Խաչիկ | 1 | 1 | 123000 | 123000 |
| 28 | ՀՈԱԿ-ի բանվոր | Ռինդ | 1 | 1 | 123000 | 123000 |
| 29 | ՀՈԱԿ-ի բանվոր | Չիվա | 1 | 1 | 114000 | 114000 |
| 30 | Ավտոպարկի պահակ | Արենի | 1.5 | 3 | 123000 | 184500 |
| 31 | Փողոցների մաքրության պատասխանատու | Արենի | 1 | 1 | 123000 | 123000 |
| 32 | Ոռոգման ջրերի ջրբաշխ /սեզոնային 6 ամիս/ | Արենի | 3 | 4 | 114000 | 342000 |
| | **Ընդամենը** | | **39.25** | **44** | **6170000** | **7340750** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ` ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 2
Արենի համայնքի ավագանու
05.12.2025 թվականի թիվ 148-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ կազմված 3 խմբից

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 175000 | 175000 |
| 2 | Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ | 0.5 | 1 | 170000 | 85000 |
| 3 | Հաշվապահ | 0.5 | 1 | 163000 | 81500 |
| 4 | Դաստիարակ | 3.36 | 5 | 130000 | 436800 |
| 5 | Դաստիարակի օգնական | 3 | 5 | 123000 | 369000 |
| 6 | Երաժիշտ դաստիարակ | 0.5 | 1 | 130000 | 65000 |
| 7 | Պարուսույց | 0.25 | 1 | 125000 | 31250 |
| 8 | Ֆիզ. ղեկ | 0.25 | 1 | 125000 | 31250 |
| 9 | Բուժքույր | 1 | 2 | 130000 | 130000 |
| 10 | Խոհարար | 2 | 2 | 125000 | 250000 |
| 11 | Դռնապան | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| 12 | Լվացարար | 0.25 | 1 | 123000 | 30750 |
| 13 | Տնտեսվար | 0.25 | 1 | 123000 | 30750 |
| 14 | Հավաքարար | 1 | 2 | 123000 | 123000 |
| 15 | Օժանդակ բանվոր, լվացարար | 0.25 | 1 | 123000 | 30750 |
| 16 | Օժանդակ բանվոր | 0.25 | 1 | 123000 | 30750 |
| **Ընդամենը** | | **14.86** | **27** | **2134000** | **1962300** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 3
Արենի համայնքի ավագանու
05.12.2025թվականի թիվ 148-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ կազմված 2 խմբից

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 175000 | 175000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 | 75000 |
| 3 | Դաստիարակ | 2.24 | 2 | 130000 | 291200 |
| 4 | Դաստիարակի օգնական | 2 | 2 | 123000 | 246000 |
| 5 | Երաժիշտ դաստիարակ | 0.5 | 1 | 130000 | 65000 |
| 6 | Պարուսույց | 0.25 | 1 | 125000 | 31250 |
| 7 | Ֆիզ. ղեկ | 0.25 | 1 | 125000 | 31250 |
| 8 | Բուժքույր | 0.5 | 1 | 130000 | 65000 |
| 9 | Խոհարար | 1 | 1 | 125000 | 125000 |
| 10 | Դռնապան, օժանդակ բանվոր | 0.75 | 1 | 123000 | 92250 |
| 11 | Լվացարար | 0.25 | 1 | 123000 | 30750 |
| 12 | Հավաքարար | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| **Ընդամենը** | | **9.74** | **14** | **1582000** | **1289200** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 5
Արենի համայնքի ավագանու
05.12.2025թվականի թիվ 148-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի <<Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ կազմված 5 խմբից

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 175000 | 175000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 1 | 150000 | 150000 |
| 3 | Դաստիարակ | 5.6 | 5 | 130000 | 728000 |
| 4 | Դաստիարակի օգնական | 5 | 6 | 123000 | 615000 |
| 5 | Երաժիշտ- դաստիարակ, պարուսույց | 1 | 1 | 130000 | 130000 |
| 6 | Ֆիզ. ղեկ | 0.25 | 1 | 125000 | 31250 |
| 7 | Բուժքույր | 1 | 1 | 130000 | 130000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 125000 | 125000 |
| 9 | Խոհարարի օգնական | 1 | 1 | 123000 | 123000 |
| 10 | Այգեպան | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| 11 | Տնտեսվար | 0.5 | 1 | 125000 | 62500 |
| 12 | Փականագործ | 0.5 | 1 | 125000 | 62500 |
| 13 | Օժանդակ բանվոր | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| 14 | Հնոցապան | 1 | 1 | 123000 | 123000 |
| 15 | Հնոցապան (սեզոնային) | 2 | 2 | 123000 | 246000 |
| 16 | Հավաքարար | 1 | 2 | 123000 | 123000 |
| 17 | Լվացարար | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| 18 | Պահակ | 1.5 | 3 | 123000 | 184500 |
| **Ընդամենը** | | **24.85** | **31** | **2322000** | **3193250** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 6
Արենի համայնքի ավագանու
25.11.2025 թվականի թիվ 148-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ կազմված 2 խմբից

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 175000 | 175000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 | 75000 |
| 3 | Դաստիարակ | 2.24 | 3 | 130000 | 291200 |
| 4 | Երաժիշտ դաստիարակ | 0.5 | 1 | 130000 | 65000 |
| 5 | Դաստիարակի օգնական | 2 | 3 | 123000 | 246000 |
| 7 | Բուժքույր | 0.5 | 1 | 130000 | 65000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 125000 | 125000 |
| 9 | Դռնապան | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| 10 | Լվացարար | 0.25 | 1 | 123000 | 30750 |
| 11 | Հավաքարար | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| 12 | Օժանդակ բանվոր | 0.5 | 1 | 123000 | 61500 |
| **Ընդամենը** | | **9.49** | **15** | **1455000** | **1257450** |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

Հավելված 6
Արենի համայնքի ավագանու
05.12.2025 թվականի թիվ 148-Ա որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Արենի համայնքի Ելփին բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ կազմված 2 խմբից

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 175000 | 175000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 | 75000 |
